ՄԱՀԱԽՕՍԱԿԱՆ

Տ. ՆԵՐՍԷՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՂԱՊԱԼԵԱՆ
(1937-2009)

Ընթացիկ տարուայ յունիս 27-ի առաւօտեան, «Նաիրի» բժշկական կենտրոնում կեանքի 72-րդ տարում վախճանուեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի երիցագոյն միաբաններից Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու նուիրեալ եւ բազմավաստակ սպասաւոր Գերաշնորհ Տ. Ներսէս արք. Պողապալեանը:

Յունիսի 29-ին Ս. Գայանէ վանքում նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի տեղի ունեցաւ հանգուցեալ Սրբազանի հոգեհանգստեան արարողութիւնը: Հոգեհանգստեան արարողութեանը ներկայ էր նաեւ Հայաստանի Հանրապետութեան նախագահ Սերժ Սարգսեանը:

Յունիսի 30-ին նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Հայրապետի Թեղենիքի Սրբոց Նահատակաց եկեղեցում տեղի ունեցաւ Ներսէս սրբազանի յուղարկաւորութեան արարողութիւնը:

Տ. Ներսէս արք. Պողապալեանը (աւազանի անունը՝ Յակոբ) ծնուել է 1937թ. Կիլիկիայի Գըրգիան աւանում, որտեղից 1939թ. գաղթել է Բէյրութ: Սովորել է Բէյրութի Նուբարեան հայկական վարժարանում, Անթիլիասի դպրեվանքում, այնուհետեւ Բէյրութի կենտրոնական բարձրագոյն վարժարանում:

1957թ. ընտանիքով տեղափոխուել է հայրենիք: Ուսումը շարունակել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գեւորգեան հոգեւոր ճեմարանում:

1957թ. Ս. Ստեփանոս Նախավկայի տօնին երանաշնորհ Տ. Հայկազուն արքեպս. Աբրահամեանի կողմից ձեռնադրուել է սարկաւագ:

1960-1961թթ. ուսանել է Ռուս Ուղղափառ Եկեղեցու Զագորսկի ակադեմիայում:

1961թ. Վազգէն Ա Հայրապետի ձեռամբ դարձել է կուսակրօն քահանայ՝ վերանուանուելով Ներսէս:

1962թ. Վազգէն Ա Կաթողիկոսի կողմից ստացել է վարդապետական, ապայ՝ 1965 թ. ծայրագոյն վարդապետութեան աստիճան:

1963-1965թթ. ուսանել է Անգլիայի Եօրքշեր նահանգի Յարութեան քոլեջի աստուածաբանական բաժնում, միաժամանակ մասնակցել է Քեմբրիջի համալսարանի անգլիական գրականութեան եւ մշակոյթի ամառային դասընթացներին:

1965-1969թթ. վարել է Ս. Էջմիածնի հոգեւոր ճեմարանի տեսչի պաշտօն:

1969-1970թթ. ուսանել է Եկեղեցիների համաշխարհային խորհրդի Ռոսսէի Էկումենիկ ինստիտուտում:

1969-72թթ. եղել է Շուէյցարիայի հայոց հոգեւոր հովիւ:

1973թ. ընտրուել է Անգլիայի թեմի առաջնորդ:

1974թ. ձեռամբ Վազգէն Ա Կաթողիկոսի ձեռնադրուել է եպիսկոպոս:

1982թ. երջանկայիշատակ Վազգէն Ա Կաթողիկոսի կողմից հրաւիրուել է Մայր Աթոռ եւ նշանակուել Մայր Աթոռի դիւանապետ: Եղել է նաեւ Գերագոյն հոգեւոր խորհրդի անդամ:

1983թ. ընտրուել է Եկեղեցիների համաշխարհային խորհրդի կենտրոնական կոմիտէի անդամ:

1982-1995թթ. հիմնել եւ ղեկաւարել է Հայաստանի Աստուածաշնչային Ընկերութիւնը:

1986թ. ձեռամբ Վազգէն Ա Կաթողիկոսի ստացել է արքեպիսկոպոսի պատիւ:

1991թ. ի վեր եղել է Եւրոպայի եւ Մերձաւոր Արեւելքի Աստուածաշնչային ընկերութեան գործադիր կոմիտէի անդամ:

1993-2001թթ. Ջինիշեան Յիշատակի բարեգործական հիմնադրամի հիմնադիր մարմնի անդամ է եղել եւ ծառայել է որպէս ատենապետ:

1999թ. ընտրուել է Ռուսաստանի Հումանիտար ակադեմիայի իսկական անդամ:

1999թ. յուլիսի 4-ին ընտրուել է կաթողիկոսական տեղապահ եւ կազմակերպել է կաթողիկոսական ընտրութիւնները 1999 թ. հոկտեմբերի 27-ին:

2000-2003թթ. իր հոգեւոր գործունէութեան 40-ամեակի առիթով Կոտայքի շրջանի Թեղենիք գիւղում կառուցել է Սրբոց Նահատակաց եկեղեցի՝ իր ծնողների՝ Գրիգոր եւ Մաքրուհի Պոզապալեանների յիշատակին, որի առիթով Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի կողմից պարգեւատրուել է Հայ Եկեղեցու բարձրագոյն՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ շքանշանով:

Ներսէս սրբազանը հրատարակել է 10 անուն բանաստեղծական եւ քարոզիսօսական գրքեր: Դասախօսել է Գեւորգեան հոգեւոր ճեմարանում:

2000-2006թթ. եղել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հրատարակչական մարմնի տնօրէն:

Սրբազան Հօր վախճանը մեծ կորուստ է Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու եւ նրա հաւատաւոր զաւակների համար:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Գերագոյն հոգեւոր խորհուրդը եւ Հայ Եկեղեցու հոգեւորականաց դասը աղօթարար սրտով սգում են Սրբազան Հօր մահը: